

# Փ Ա Ր Ի Ձ

Լրացիր անեն ուրբաբ օրեր հրատարակի.  
 Բարեկամ գինն է Փարիզի համար. 15 ֆր.  
 Տանկասանի, Վուսթրի, Սեզոնի. 18 »  
 Ռուսասանի եւ Պարսկասանի. 25 »  
 Ամերիկայի եւ Հնդկասանի . . . 28 »

Մտարարութիւնները տարեկան օրինակ :  
 Կամակ եւ գրութիւն պէտք է ուղղից  
 այս օրինակ հասցէի. A. Mourad,  
 rue Saint-Sulpice, 38, à Paris.  
 Չվարեալ նամակները պիտի մեծըզին :

Լ Ր Ա Պ Ի Ր Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն

ԳԻՆՆ ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹԱՆՆԵՐ.

ՔԱՂԱՔ	ԿԱՐԱ ՊԱՅՄԱՆԱՅԱՐ	90 ՕՐ ՊԱՅՄԱՆԱՅԱՐ
ԱՍՏՈՐՏԱՐ	214 1/4	215 1/8
ՀԱՄՊՈՒՐԿ	189 3/4	188 5/8
ԼՕՆՏՈՆ	25 1/2	24 87/8
ՎԻՆՆԱ	...	187 1/2
ՓԵՔՐՊՈՒՐ	...	564 1/2
ՄԱՏԻՏ	5 27 1/2	5 22 1/2
ՆԵԱՊՈՒՍ	429 1/2	425 1/2
ՅՈՒՆԻՅՏՕՐ	214 7/8	215 7/8

ՓԱՐԻՉ 10 ՄԱՅԻՍ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ

Սալօայի, Նիսի եւ դեսպանաժողովի խնդրոյն վրայ նուազ խօսուեցաւ այս շաբթու. բայց Լօնտայէն ամսոյս 7 րոնով գրուած նամակի մը հետեւեալ խօսքերը բաւական են նոյն խնդրոյն վիճակը բացարեւոյ :

« Սալօայի ու Չուիցցերիոյ խնդրէն յառաջ եկած գրգռութեան շարքեց անհոգութիւնը : Յայտնի եղաւ թէ որ եւ իցէ սերուիքն մը այս խնդիրը Լոնտոյ նիսի չպիտի ընէ, թէ եւ իրացնէ մեր ու ձեր երկրին մէջ եղած յարաբերութիւնները պաղած ալ լինին : Բայց Անգլիոյ հաղահաղան անձինքը շատ քիչ գրաւիին իրացած գործի մը վրայ, եւ Մ. Փոլիսի Չուիցցերիոյ ուղղած աշտակ ծաւուցազները, որ այս շաբթու հրատարակեցան, ուշադրութիւն անգամ չգրգռեցին :

» Խնդիրն այժմ լուծեալ է, եւ դեսպանաժողովն իսկ, որուն հաւատարմութիւնը ստակաւորուելի է, նիսի շաբթու չպիտի վոխէ իրաց վիճակը : »

Գերմանիոյ մէջ անցած դեպքերն այս միջոցիս աւելի ուշադրութեան արժանի եղած են : Փրուսիոյ սերուիքնը դարձեալ գրաւել կամի Տանիմարայի Շլեզվիկ-Հօլսթեյն դքսութեան երկիրը, պատճառ բռնելով որ 1851 եւ 1852 րուականներուն եղած դաւանադրութիւնները Տանիմարայի կողմէն մինչ ցիկեսս անգործադրելի մնացած են : Պետլինի խորհրդանոցին մէջ այս խնդրոյն վրայ սաստիկ վիճաբանութիւններ եղան ամսոյս 4ին եւ 5ին, բայց դեռ որոշում մը չյայտնուեցաւ :

Այս նիսի վրայ թայլոց լրագիրն աւել թէ Փրուսիան պէտք է իւր բոլոր գորութիւնը հաւաքելով Գաղիոյ դէմ պատերազմի պատրաստի, որ պիտի լինի, թէ եւ չգիտնանք թէ երբ : Նոյն լրագիրը զարմանայ

թէ ինչպէս Փրուսիա կամի նորէն Շլեզվիկի մէջ մտնել, մինչ խօսք մը կայ որ Գաղիոյ եւ Տանիմարայի մէջ դաւանակցութիւն մը հաստատուած է : Չեմք գիտէր, ապա թայլոց, թէ այս դաւանակցութիւնը Փրուսիոյ Տանիմարայի քրտն սպառնալիքէն յառաջ եկաւ, բայց Փրուսիոյ շատ անպատեհ է Տանիմարայի գործերուն մէջ մտնելը : Գաղիա, յաւելու թայլոց, բազմալ Փրուսիոյ եւ Տանիմարայի մէջ պատերազմ լինել, որովհետեւ նոյն պատերազմը պիտի միացնէ Տանիմարայի, Շուէսք եւ Նորվեգիան Գաղիոյ յօժարութեանցը կամակից գտնուելով. ուստի պարտ է Անգլիոյ իւրագրեցութիւնը գործածել, որ Փրուսիան ուրիշ ասեցի բողոք Տանիմարայի հետ ունեցած բոլոր կռիւները :

— Շատ դժուար եղան Սիկիլիոյ վիճակին վրայ առնուած միտեանց հակառակ տեսլիւններուն անոյցը չափազանցեցն որոշելը : Երբ ձեռնուլայէն ու Փոլիսիէն եկած լրերուն նայիմք, բոլոր կողմն ապրաստմբաժ է, սերուիքն զօրէն ալ դեմ դնելոյ անկարող գտնուելով՝ բոլորովին անփոք կեցած են : Իսկ երբ Նեապոլիտեն ու Վիեննայիէն եկած լրերուն հաւաստիք (որ միեւնոյն աղբիւրէ եւ միեւնոյն ոգով անձինքներէ սրտած են), վերջին ծայր խաղաղութիւն մը սիրած է բոլոր Սիկիլիոյ մէջ : — Միայն ժամանակը պիտի յայտնէ նշանակութիւնը :

Փոլիսի ու Միլանի մէջ գտնուող սիկիլիացիները մեծ համակրութիւն ցուցանեն իրենց հայրենեաց ապստամբութեանը. բայց Սարսենիոյ կառավարութիւնը ամեն ջանքն ի գործ դնէ, որպէսզի ապստամբները քաղաքէն զտարու չսայ եւ ոչ ալ ապստամբութեան կողմնակիցներուն սիրքը վիճաւորէ : Նոյն կառավարութիւնը երկու պատերազմական նաւեր խրկեց Սիկիլիոյ ծովերը, որ հարկ եղած ժամանակը նոյն կողմն գտնուող իրեն հպատակները պաշտպանեն :

Անցեալ շաբթուան *Մօրնիկ-Փօր* լրագրոյն տուած լուրը, թէ Կառիպայի Սիկիլիա գնաց, նոր հաստատութիւն գտաւ. որովհետեւ Կարիպայի ամսոյս 5ենց լուսնայի գիշերը մեկնէր է ձեռնուլայէն իւր սեպհական նաւովը դեպ ի Սիկիլիա : Կարիպայի պէտք եղած սակը Անգլիայէն խրկուեւ է աւել. եւ յաւելցրնէն թէ երեք հազար մարդ ունի եղեր իր հետը : Արդեւ քանի մը սարսենիացիներ նոյն կողմն գացեր էին, որն որ ապստամբներուն մեծ քաջալերութիւն պատճառէր է :

Հոչակաւոր Յովսէփ Մաձիմիի խօսած մեկ նաւը լրագրի մը մէջ այսպէս համառօտեալ տեսանք :

« Սիկիլիացիք, Իսպանիայի միացնելոյ համար միտ պատերազմեցաւ : Քիչ ասեցն այս միտքիւնը մտաձիմն չպիտի լինի, այլ իրական : 1848ի յեղափոխութիւնը արդեալ ցոյց տուաւ որ բնաւ սերուիքն մը չկրնար հաստատու մնալ. երբ ժողովուրդն ամբողջ հակառակ է : »

» Սիկիլիացիք, երբ, յիշեցէք ձեր նախնիքը, պատերազմեցէք դիւցազնաբար, եւ պիտի յաղթէ : Պուրպօսեան կառավարութիւնը կործանելէն յետոյ հոչակեցէք Վիգոր-Եմմանուէլի քաղաքապետութիւնը : Հասարակապետական չեղած միտարական էի. ահա այս պատճառաւ է որ այսօր իմ գաղափարներս զոնեմ արդար ու ազգային միապետութեան մը համար : Փրուսիոյ բոլոր ժողովուրդը մեկ ժողովուրդ բաղկանայ : Կեցցէ Վիգոր-Եմմանուէլ արեւելի Իսպիոյ :

» Սիկիլիացիք, ժամանակն եկաւ : Յանուն Իսպիոյ, ի զէն փութայցէք :

ՅՈՒՆԻՅՏՕՐ ՄԱՅԻՍ »

— Խօսք մը կայ թէ, Աւստրիոյ կայսրը առժամանակեալ կերպիւ կառավարութեան պիտի հրաժարի կամ նախապարհորդութեան պատճառաւ մայրաքաղաքէն պիտի հեռանայ, եւ իւր բացակայութեան ժամանակը սերուիքն կառավարութիւնը Մախիմիլիան արեւոյնափն պիտի բողոքու : Այս ալ յաւելցնենք թէ, նոյն կայսրը Գաղիոյ կայսեր այցելութեան պիտի գայ : Բայց այս խօսքերը միտ հաստատութեան կարօտ են :

— Օ՛հօնել մարաշայիսին Սպանիա հասնելէն ի վեր երեք զլխաւոր դեպքեր

սեղիք ունեցան: Մեկը՝ 1836 հոկտեմբեր 12-ին ի վեր եղած բոլոր փառափախան յանցաւորներուն ներում շնորհուիլն է: Երկրորդը՝ յառհրդարանք բացուելոյն հրաւերը: Իսկ երրորդն է Մօսկովայի կոմսին եւ իւր եղբորն քրած յայտարարութիւնները: Յիշեալ կամքը՝ առանց բազումիս նանաչել ուզելոյ՝ իւր կարծեցեալ իրաւունքն ազատ եւ ինքնաշօթար կամօք հրաժարէր է, իւր պատուոյն վրայ խօսք տալով՝ որ այստեղեսէ երբեք այնպէս յուզուանքներ չըպիտի յարուցանէ: Այս յայտարարութեան քարգանձութիւնը մեր ընդերցողաց ներկայացնել զանց չեմք ընէր:

«Աս, Պուրպոսեան եւ Պրականսեան տօն Գառնիւթի, Մօսկովայի կոմս, հանդիսական կիտիսի ատեն եւ ծանուցանել ամենուն առջեւ, որ Սպանիոյ քարք ծառանցիւց իրաւունքն, զոր հաւաստելով ունիմ, ձեռք բերելոյ համար եղած գայնակուն շահեկեան անարգաւարտութեանը ի ներհուս հանդեպ լինելով, եւ բաղձալով որ իմ պատառաւս է ոչ իսկ անուանուի բնու մեկը նորէն չլուծէ հարեմեացս խաղաղութիւնը, հանդարտութիւնը եւ համագտակութիւնը վերջուի, որուն բուն իմ բաղձանօքս եւ ազատ ու ինքնաշօթար կամօքս երջանկութիւն մարտի, եւ որպէս զի չկամուիք քիւսմեան ունեցած արգելական վիճակէս պայտիս խօսիլ տիպեալ եւ, վաճառոյ հանդիտի հրամարիմ այժմ է՝ միտս այն իրաւունքն զոր հիմա յիշեցի. վրայելով որ հարեմեաց տեղանին վրայ մասուցած այս գոնս՝ վերջին կարուսիս ատենը քրած որոշման արհիւնքն է. երբ մեկը կարողանայ նորէն այսպիսի վործ մը ընէլ, միտս փառափախան պատերազմ պիտի յարուցանէ, զոր ես ամեն գոն ընելով խափանել կամիմ:

«Ուսի, պատուոյ վրայ խօսիմ, որ երբեք հաւանութիւն չպիտի տամ անոր, որ քիւսմեանը եւ քիւսմեանը քարք երկիրներուն մէջ իմ որօշակս բարձրացնէ. եւ ծանուցանել որ, երբ մեկը զրոշադարար պայտիս ծանուցանի մէջ իմ անունս այս կայտալիս գործածել, զայն իմ պատուոյն եւ համարախ բեւանի պիտի համարիմ:»

«Ծանուցանել դարձեալ, որ կատարեալ ազատութիւն վայելելոյ համար վարկենէս պիտի նորոգեմ այս հրամարականը, որպէս զի որ եւ իցէ ծանանակ մարդ չսարկուի զայն ինքնակամ յօտարութեամբ տալու: Փոյ հարեմեացս երջանկութիւնն ու երանութիւնը այս գոնիս վարձ լինի:»

Տուեալ ի Փօրթոգս 25 Ապրիլ 1860.

Ստորագրեալ

ՊԱՍՏՈՒՆԻՍ ԳՈՐԿՈՎՍԿԻ ԵՎ ՊՐԱԿԱՆՍԵԱՆ

Իւր եղբորն տօն Ֆերսիմանսօին խօսածն ալ գրեթէ այս ձեւովն է:

«Ամայս 7-ին Մօսկովայի կոմսն ու իւր եղբայրն տօն Ֆերսիմանսօ՝ բոլոր փառափախան յանցաւորներուն հէտ ներում ընդունելով՝ Փօրթոգայն մեկնէր են, որ երբան տրուութեան Դոշօն շոգեհար մտնէ: Ասէն քիւսմեան շոգեհար գիրեմք Մեր պիտի տանք:»

«Վիքթոր-Էմանուէլ քաղաւորը, որ իւր նոր գաւառներուն այցելութեան ելած էր, ամայս 8-ին վերսին Փուրիս հասաւ:

— Կոստանդնուպոլիսէն ապրիլ 25 քրւով եկած տեղեկութիւնները ծանուցանեն, քի Գաղիոյ եւ Անգղիոյ կողմէն Բ. Գրան հաշիւ մը ներկայացուէր է, որուն միջոցաւ 5 միլիոն ֆրանկ պահանջէն ձիսսէի դեպքին հասուցում:

Ուրիշ հեռագրական լուր մը ծանուցանել, քի Պէլքիսիայի տրուութեան քաղաքաւանգ Պրայանք դուքսը, Մեմիսիէի առաջին կարգի նշան մը ընդունէր է Վեհափառ Սուլթանէն. եւ Պուսայ ալ այցելութիւն մը ընելէն վերջը՝ ապրիլ 30-ին մեկնէր է Կոստանդնուպոլիսէն Վեհեթիկ երթալոյ համար: Գոնսին քրած այս հանապարհորդութեանը վրայ Պրիսիսիէն ամայս 2 քունը գրուած նամակ մը տակ քի, «Այս հանապարհորդութեան պատճառը մինչ ցկեսս անյայտ մնացած է. բայց շատ դժուար է հաւատալ, որ միայն Վուփուրի եղբերքը շրջապայելոյ համար եղած լինի:»

**ՏՐԵՆՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԸ**

**Ե.**

Մեմուրայ եւ Հայ օրագիրները.

Այս օրագիրը, որուն մէջ սոյն առաջիկայ յօդուածին գրել յանձն առած ենք, անցեալ շաբթու Մեմուրայի յարձակմանը դէմ պատասխան մը հրատարակած ըլլալով, հետաքրքրութիւնն նորոգեցաւ, եւ Մեմուրայի բնագիրը տեսնալ ուզեցինք ու տեսանք: Մեմուրայի գրիչն իր բնաւորական հեղձութեանը հակառակ, իր 335 թիւէն մինչեւ 339 թիւը Հայոց դէմ խրոխտալ, եւ երբեքն ալ որոտալ սկսած էր: Բայց այս վերջին մտայն մէջ սանձանն ու պայտանն անցնելով, Հայոց լուսաւորչական օրագիրներուն վրայ բոց շեշտու եւ կրակ տեղադրու հասեր է, եւ հայկական գրչաց մէջ խաբուծիւն չիղեւելու համար, հասարակաց հարուածի ատենը, մեզի ալ, ընդ ամբողջ, բողոքածուի, լռիկ, բայց սաստիկ ապուշի մը արձակեք է:

Չեքք բարեկամական ըլլալուն, անձկութեամբ կրճատութեանը, բայց անանց բարեկամութեանը դառնացունելու, մեզի նկատմամբ կը հարցունենք թէ, — Ընդէր հարկանէս գիտ. (1) » եւ իբրեւ հասարակաց գրիչ, մեզի եւ մեր եղբայրակցացը նկատմամբն ալ կը հարցունենք թէ, — Ո՞ կացոյց զրեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր: (2) »

Երբոր կուսակցութիւն կայ, եւ կուսակցութիւններն անարգել եւ ազատարար շարժիլ գործել եւ մեքենայել կողմն, վէճն ալ ազատ, նա եւ մշտնջենաւոր է: Թէ որ վիճին շարունակութեանը վրայ զարանալու եւ սղոտնալու կրնայ միկի իրաւունք ունենալ նէ, անտարակոյս, վէճը զրգոտիլն չէ այս իրաւունքը: Ամբողջ բնորոշ մը Հայերն ամուսնական պատիւն ու իրաւունքը պաշտպանած ըլլալուն համար շրջապայի արձանի դատելէն ետեւ, Մասիսի բնագրին քարկուրիւն բառը (3) տանկերէնին մէջ կամակա-

րութեամբ կրկին կրկին կատարուիլն Թարգմանելով յեղեղելով (4) Մշեցի Հայերը զազանի հետ համամատելէն ետեւ, Մեմուրան կրնայ իրենց ազգայնոց անունն ու պատիւը պաշտպանող օրագրաց եւ զրչաց լուծիւն հրամայել:

Մեմուրան կրճատական վէճէ չարտօթիր եղեր, եւ կուզէ որ Հայկական օրագիրներն ալ ամենին կրճատական խնդիրներու միջամուխ չըլլան: Արդէ կրնէ. ասիկայ իր բարեբաւութեանն ու մարդասիրութեանը մեծ վկայութիւն մըն է. եւ ով որ իր խեղճ հոգին անկասկած համարելով՝ այլոց հոգոյն փրկութեանը համար մարմիններուն եւ սիրտերուն խաղաղութիւնը խառնելու ետեւ կըլլայ, անիկայ սուտ քրիստոնէայ, եւ ճշմարիտ կեղծաւոր մը, նենգաւոր շահասէր եւ անձնասէր խաբերայ մըն է:

Եւ ասկայն, թէ որ նոյն իսկ Մեմուրայի վկայութեամբ՝ «Այս վէճն աշխարհի հաստատութեանն է ի վեր եղած է, եւ ասիէ ետեւ ալ պիտի ըլլայ, եւ » եւ անիկայ խափանելն իր ձեռքը չէ: (5) Մեմուրան Հայ գրիչներէն ինչ հակառակութեամբ կը պահանջէ, որ իր կրճատչութեան ակն յայտնի ազգին կրթութեանը կործանելու եւ անով ազգն սպառնալու վատաւ կամ տեղերին, աստիք ալ իրենց սուրբ եւ նուիրական պարտաւորութիւնն ոտքի տակ անելով, աստիք անոր հանցիլը համար լուսն եւ կարկին:

Շիտակը, թէ որ գործածած բառերուն նշանակութիւններն իրենց զարգաւարներուն հետ կընելով ճշդել արժան է նէ, Հայ գրչաց եւ մեր գրածներուն մէկն ալ կրճատական վէճ չէ, կրճատ պատճառանօք ազգը քայքայելու հետամուտ կրճատարաց զնայցըր քննութիւնն է: Տիրապէս կրճատական կըլլայ վէճը, երբոր կուսակցութեանը իւրաքանչիւրն աստուածաբանական մոլութեամբ իրենց կրճատ ուղիղ եւ ճշմարիտ, եւ հակառակորդները թիւր եւ սուտ ցրցունելու կը պարտալին: Մեմուրան որ Բարին աշխարհական եւ աստուածընդդէմ իշխանութիւնն օրինակը ցրցունելու ճգամը քանի մը թիւ հետզհետէ մրտախ էր, Հայ գրչաց կողմէն աս օրերս այսչափ մըն ալ անտեղութիւն եղած ըլլալուն ապացոյց չիրար տալ:

Այսու ամենայնիւ լուսաւորչական Հայ գրիչները սիրով յանձն կանեն. ինչ եւ իցէ նկատմամբ եւ ինչ եւ իցէ պատճառաւ կրճատ բառ բնու չգործածել, յանձն կանեն այսինքն ովկիանոր դատարկել, թէ որ Մեմուրան ալ յանձն կանէ, Ատանայէն՝ Բալուէն՝ Անգրիտանուպոլիսէն՝ Պատարմայէն, եւ էն վերջն ալ, Մուշէն ծովը Թափալ անդրալեւանական գետերուն առջին կտրել: Մեմուրան չիկրտար այս ծանր եւ անհարին գործը վրան անել: Ազգի, իր տիրութիւնը մենք իրեն ամօժ չենք համարիր. բայց իրեն անպարտաւակ կը յայտնենք, որ քանի որ այլոց կողմէն գործելը կը շարունակէ, Հայոց կողմէն ալ խօսելու իրաւունքը չիղաղարիր:

Մենք ալ իբրեւ Հայ, եւ մասնաւոր Մեմուրայիէն ալ հրաւեր ընդունած ըլլալուս, դատը մեզի համար հիշցած չենք համարիր, եւ անդին Մրշալուսոյ Թարգմանութեանը հետեւելով լռելիքիս, ասդին Մեմուրայի բնագրին վրայ ճշդելով ճշգրտելով, ասելի համարձակութեամբ կընենք ասիէ ետեւ:

**Գ. Ե. ՄԵՍՆԱԿԱՆ.**

Փարիզ, 1860, մայիս 10.

(1) Յով. ԺԷ. 23: (2) Պորթ. Ե. 27: (3) Տեա Մասիս, Թիւ 422: (4) Տեա Մեմ. Թիւ 335, էր. 3, էջ 2: (5) Տեա Մեմուր. Թիւ 339:



# Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

## ՄԱՐՏԻՆԻԱ. 5 Մայիս:

ՄԵՏԱՔԱ ԵՆ ԲՈՒՌՆԻ (Քօզա). — Այս շաբթու շատ քիչ գործ եղաւ. և միշտ բարձր գիններով: Եկած ապրանքն ալ շատ բան մը չէր. միայն Նեփա շոգենուով եկած 206 պալեայ բնիկ Պարսկաստանի (Աճէմ) մետաքան է յիշատակութեան արժանի:

Անաւտիկ ծախուած ապրանքաց ցուցակը:

Անաւտիկ		Պարսկաստանի	
4 Պալ.	Պրուսայի ֆիլանթրո.	90ֆ	» » ֆ »
7 »	Ստրեստանի »	95 »	» 96 »
7 »	Պէնկալայի »	56 »	» 57 »
4 »	Պաֆա »	50 »	» 52 »
5 »	Չինաստանի »	51 »	» 52 »
2 »	Արտասին »	52 »	» 54 »
1 »	Գամաուայի »	42 »	» »
5 »	Պրուսայի C.-G »	58 »	» »
48 »	Պարսկաստանի »	56 »	» 48 »

Բոճոճ		Պրուսայի	
5100 ֆիլ	Պրուսայի	19ֆ 25ս	21ֆ »
400 »	Տէմիքաէ	23 »	» »

ԲԱՄԲԱԿ. — Ուժ աւուրս մէջ ծախուած բոլոր բամբակն է 209 պալեայ կիպրոսի, 50 քիլոկրամը ֆըրանսէ 77 80 էն ֆ. 85. և 11 պալեայ Ատանայի ֆըրանսէ 77 50:

ԲՈՒՐՆԻ. — Աւարտած շաբթուան մէջ ծախուեցաւ.

20 Պալ.	Գասպապաշի ընտիր	50 քիլ.	ֆ. 147	50
20 »	»	միջակ »	122	50
50 »	Զմիւռնիոյ ընտիր »		97	50

Անուղղով (մեզար)

257 Պ.	Ռուսիոյ մէրիսու լուացած A A A.	քիլոկրամը ֆ. 6	40 էն 7	50
75 »	Նոյն տեսակ A A.	»	5 15	6 05
21 »	» » A.	»	5 10	5 45
85 »	Աւրուած »	»	5 80	4 —

ՇԱՔԱՐ. — Զտած շաբաթէն (ռաֆինէ) նշանաւոր գործեր չեղան. և մանր մունր ծախուածներն ալ հետեւեալ գիններով են, մարտէն յանձնելոյ պայմանաւ:

Գլուխ մերկ 50 քիլոկրամը ֆ. 45: — Թղթով 7 0/0, ֆ. 42: — Փխրած (Յօզ) տակառով, ֆ. 45: — Նոյնը փոքր տակառներով, ֆ. 45 50:

ՊԱՏԱՐԱՐ (Մամ շէրէր). — Գաղիական Մուշա-Փաշա նաւուն 445 սնտուկ Հափանայի շաբաթը՝ ըստ հունանացոյ թիւ 42, որ մեր 14 1/2 էն 16 թուոյն համեմատի, 50 քիլոկրամը 40 ֆրանքի ծախուեցաւ:

ԻՍԷՎԷ. — Այս շաբթուան եղած գործերը բաւական զոնացուցիչ էին: Մանր մունր վաճառումներէ գլխաւ, ծախուեցաւ նաև 16000 տոպրակի չափ Ռիօ իանովէ, մէկ մասը պատրաստ և մէկ մասն ապայանձնելի, որուն գինն է ի միասին 70 ֆրանք 50 քիլոկրամը, մարտէն յանձնելոյ պայմանաւ. և 5600 տոպրակ Հայիթի նոյնպէս պատրաստ և ապայանձնելի ու նոյն պայմանաւ ֆ. 80, տոպրակն էսթրոնով: Եկեմէն ընտրած խանիվէն ալ 700 տոպրակ ծախուեցաւ, 50 քիլոկրամը 115 ֆրանք:

ՊՂՂԵՂ (Պիպէր). — Եղած բոլոր գործն է 500 պալեայ Մունտարայի պղպեղ, 50 քիլոկրամը 60 ֆրանք, 45 0/0 էսթրոնով:

ՅՈՒՐՆԵ. — Շաբթուան սկիզբներն եղած գործերը բաւական լեցուն գիններով էին, բայց երեկոյն է ի վեր առնողներուն բով այն եռանդը չմնաց, կարծենք զեղեցիկ օդերուն վրայ հասնելուն ազդեցոյ:

Թիւնն է այս: Անաւտիկ ծախուած ապրանքաց ցուցակը:

Պարսկաստանի

800 էրթ.	Ափրիկ. կրծր շրժ.	127/124 ք. ֆ. 25	—
2400 »	Կալացի »	126/122 »	20 95 75

Ապայանձնելի

4800 էրթ.	Իրա »	շաբթն 126/122 ք. ֆ. 22	18 75
5200 »	Մարիսօփօլի »	127/124 »	25 50 —
1600 »	Դանուրի »	125/121 »	19 68 75
3200 »	Կալացի »	125/121 »	20 31 25

ՍՈՒՍԱՐ. — Այս շաբթու գինները քիչ մը բարձրացան՝ անշուշտ ապրանքին նուազութեանը պատճառաւ. որովհետև հիմա հրապարակիս վրայ Պոմպայի սուսամէն բոլորը 8000 կենդիւնար մնաց: Ապրանքի տէրերը շատ բարձր գին պահանջեցին, բայց ծախուած 10000 կենդիւնար սուսամէն գինն էր 59 ֆ. 100 քիլոկրամը, էսթրոն 1/2 0/0 և 3 ամիսով: 7000 պալեայի չափ ուրիշ վաճառում մըն ալ եղաւ, բայց գինը ծածուկ մնաց:

Արևելքի ապրանքէն 600 կենդիւնար Թարսիսի սուսամ ծախուեցաւ 100 քիլոկրամը ֆ. 67 50, էրեր ամիսով:

ՔՅԱՆ ԶՈՒՐՆ. — Յուլիս ամսուն վերջը Ռուսաստանէն գալիք 4000 կենդիւնար հունար ծախուեցաւ ֆ. 56 50, և 7—800 կենդիւնար Սիկիլիոյ ֆ. 59, էրեր ամիսով:

Անաւտիկ անցեալ տարուան յունվար, վետրվար, մարտ և ապրիլ ամիսներուն մէջ եկած սուսամէն և քիւնի հունտին՝ այս տարուան նոյն 4 ամիսներուն մէջ եկածին բազորատութեան ցուցակը:

1859	1860
98,225 կենդ.	Արևելքի սուսամ 64,500 կենդ.
126,945 »	Ափրիկէի և Հնդկաստ. 96,520 »
53,245 »	ԲՅանի հունտ 31,400 »
258,415 »	191,920 »
	նուազութեան տարբերութիւնը 66,495 »
	258,415 »

## ՀԱՆԿԵՍ ՇԱԲԱԹԱԿԱՆ

### ՎԱՆԱՆՍ. 8 Մայիս:

ՇԵՐԱՎ. — Բարեբաղդաբար այս շաբթու օդը բարեխառնեցաւ. տեղեկներուն շատ շուտ բացուիլ սկսելովը շերամագործները (պէտէկիթի) կարողացան առանց դժուարութեան իրենց դեռահասակ որդերը կերակրել և մնացած հունտերն ալ արժընքները: Անա վերջապէս նոր հունտէրն գործողութեանցը սկսանք, թէ և քիչ մը ուշ, բայց յաջող և ապահով հանգամանքներով: Յուրտերը ԹՅԵՆԻՆԵՐՈՆ փրատ չտունին, և առատ տերե պիտի ունենանք:

Սպանիայէն եկած լրերը խիստ յաջող են. հոն որդերը չորրորդ հասակը կամ բունը մտեր են:

Մետաքան իր գինն անփոփոխ պահած է. և զըտնուած ապրանքն ալ որ շատ քիչ է, դուրս հանող չկայ: Ընդհանրապէս ամեն հրապարակներուն վրայ հանդարտութիւնը տիրած է:

### ՕՊԱՆ. 6 Մայիս:

ՇԵՐԱՎ. — Երեկ հրապարակիս վրայ զրեթէ գործ չեղաւ. և ծախուած քիչ մը ապրանքն ալ օտար երկրի ապրանք էր: Ասոր հակառակ խիստ շատ շերամի հունտ կար: Օդը շատ զեղեցիկ է, տեղեկները ստատիկ արագութեամբ բացուիլ սկսան, և

ամեն տեղ հունտերը դիւրութեամբ արժընքան և ընդհանրապէս շատ լաւ վիճակի մէջ են: Եթէ սաստիկ տար օդեր վրայ հասնելով շերամագործներուն յոյսերը չփնջանքնեն, իրաւցնէ առատ բոճոճ (քօզա) պիտի ունենանք:

Ամենէն ընտիր հունտերն ալ 25 կրամը ֆ. 1 էն 1 50 ի ծախու զրուած են. որովհետև ժամանակն է որ ծախողները ծախեն ազատին:

Ապրիլ 28էն մինչև մայիս 3 Տանկաստանէն Մարսիլիոյ նաւահանգիստը մտած գլխաւոր ապրանքանց ճեսակներն ու քանակութիւնը:

Մետաքան	պալեայ	248
Բոճոճ (քօզա)	»	4
Մետաքանի կտորտուք (ֆուլգոն)	»	1
Մոշոր մետաքան (պօռն)	»	0
Բամբակ	պալեայ	415
Բուրդ	»	555
Մորթ	»	58
Շուշմայ (սուսամ)	տոպրակ	1425
Մեղրամով (պալմուտ)	»	2
Կանեփ (քէմէն Թօմուտ)	»	2
Դիտոր (մազը)	տոպրակ	102
Այծու մազ	պալեայ	8
Միսխտա (Թիւթիւն)	»	1
Մառուտակ (միյան քօքիւն)	պալեայ	119
Տգրուկ (սիւլիք)	»	52
Եղջիւք (պուլմուք) 0 մաս (փառմի) և տէնկ	»	4
Խէճ Մարտիոյ (զամբ արամը)	սնտուկ	41
Խանիվէ	տոպրակ	57
Ապրանք (սիւնիէր)	տոպրակ	194
Մարգարիտ (ինճի)	ծրար	0
Կնքեալ ծրար դրամոց (կառուիլ)	»	0
Գինի կիպրոսի	տակառ	0
Տորոն քօք պոյա	պալեայ	60
Աֆիօն	սնտուկ	0
Մետաքան	»	00
Բրինձ	»	0
Բապրոն	»	0
Պղինձ (պազրո)	տէնկ	20
Զամիչ	»	210
ԲՅան	պալեայ	4

Վաղը Պօլտոյ համար Մարսիլիայէն մեկնող գաղիական թղթատար շոգենաւն է ՄԷՆՏՏՐ, նաւապետը Միշէլ: Այս շոգենաւը պտուտակաւոր է և մեքենայն 250 ձիու ուժ ունի: Նաւահանգստէն մեկնելոյ ժամանակն է, սովորաբար իրիկուան ժամը 5ին ըստ Եւրոպացոց:

## Շարագիր. Ա. ՄՈՒՐՍԵԱՆ.

ՄՍՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԷԲ

ՓԱՐԻԶ, մեր գրատեսակը. — rue Bonaparte, 44-ՊՈՒՆՍ, Պ. Եղուար Մուշաբեան:
ԱՆԿԻՐՈՒՄՆՈՒՊՈՒՆՍ, Տ. Միշիլ Գլխապետը 2ՄԻՆՈՒՆԻԱ, Տ. Ս. Տօմարսիոսեան:
ՊՐՈՒՍՍ, Տ. Պէտրո Պարսկաստան:
ՆԵՊՈՒՄՈՒՆԻԱ, Տ. Յ. Մոսկովեան:
ԹԷՐՍԵՍՏԱՆ, Տ. Թ. Ֆէլիքեան:
ԼԵՋՐՈՒՄ, Տ. Յովսէփ Յովսէփաբեան:
ՎԱՆ, Գեր. Տէր Միշիլ Վարդապէտ Երիւնյան:
ԵԱՅ, (Մոլդաւիա) Տ. Յովսէփ Պլեյբեան:
ՊՈՒՐՏԷՆ, (Վալախիա) Տ. Միշիլ:
ՎԵՆԵՆԱ, Տ. Կ. Վ. Մարգարեան:
ՓԵՌՓՈՒՐԿ ԵՆ ՄՈՒՐՈՒՆ, Տ. Յ. Եղիւբեան:
ՏՓԵՆԻՍ, Տ. Գաբրիէլ Մելգոնեան:
ԹԷՆՏՈՍՍԻՆ, Տ. Պէտրո Հէփիւեան գրավաճառ:
ԹԷՆԷՍՏԱՆ, Տ. Մ. Թորվալդեան:
ՄԱՆՉԵՍՏԵՐ, Տ. Գ. Յ. Յովսէփիւսեան:
ՆՈՒՐ-ՆՈՒՐ, Տ. Միշաբեան:
ՊԱՆՊՈՒՆՍ ԵՆ ՊՈՒՐՏԵՆ, Տ. Գ. Նախապետեան:

Հաւանաստ ԱՆՅՕՆՍ ՊՈՒՐՏՈՍ. ՏԷ ՍՈՍ. ՓԱՐԻԶ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՄԵԱՆ. Paris.— Typographie arménienne de Waldor, rue Bonaparte 44.